



Կանաչ պարարտանյութերի դերը և նշանակությունը



**Երկրագործի գլխավոր խնդիրը հող
ստեղծելն է...**

**Հողին փետք է տալ ավելին, քան նրանից
վերցնում ես:**

Տոկոսներ, և ոչ փոքր, նա ինքը կվերցնի,

յուրաքանչյուրից՝ ըստ արժանվույն, բայց ավելի ուշ:

Վ. Ֆոկին

Կանաչ պարարտացման կիրառումը թույլ է տալիս հետևել այն կանոնին, որ պետք չէ թողնել հողն առանց բուսական ծածկոցի, այլ պետք է աճեցնել սիդեռատներ մինչև, հետո կամ էլ հիմնական մշակաբույսերի միջակայքում: Կանաչ պարարտացումը՝ հողի բերրիության բարձրացման արդյունավետ միջոցներից մեկն է: Կանաչ պարարտացման արդյունավետությունը գրեթե այնպիսին է, ինչպիսին՝ գոմաղբինը: Դրա պատճառը որպես սիդեռատ օգտագործվող բույսերի կանաչ զանգվածում սննդարար տարրերի բարձր պարունակությունն է և բակլազգի մշակաբույսերի ունակությունը՝ կուտակել մթնոլորտային ազոտը: Կանաչ պարարտացման հիմնական նպատակն է՝ հարստացնել հողը օրգանական նյութով և ազոտով: Կանաչ պարարտացումը հողի հատկությունների վրա թողնում է բազմակողմանի ազդեցություն:

1. Լավանում է հողի ֆիզիկո-քիմիական բաղադրությունը:
2. Միդեռատների կանաչ զանգվածի խիտ ծածկույթը մինևույն ժամանակ կենդանի՝ մուլչ է, պաշտպանում է հողի վերին շերտը փոշիացումից և մշակաբույսերի աճեցման և հողի հաճախակի մշակման ժամանակ օրօանական նյութի հանքայնացումից:
3. Բարձրանում է հողի օգտակար միկրոօրօանիզմների ակտիվությունը: Վերջիններիս կենսաօրծունեության արդյունքում բուսական մնացորդները քայքայվում են և վեր են ածվում հումուսի, որը հանդիպում է միայն հողում և համարվում է հողի բերրիության հիմքը և լավ բերքի երաշխիքը:
4. Բարձրանում է հողի բերրիությունը, հասկապես՝ հումուսով աղքատ, ավազային հողերում հումուսի կուտակման շնորհիվ: Բակլազգի սիդեռատների կանաչ զանփվածը հարուստ է ազոտով և օրգանական նյութերով:
5. Միդեռատները կարևոր դեր են խաղում ցանքաշրջանառության մեջ: Դա թույլ է տալիս հողում պահպանել օրգանական և հանքային նյութերի հավասարակշռությունը:
6. Կանաչ պարարտանյութերը նաև սանիտարների դեր են կատարում: Նկատվում է մոլախոտերի զգալի կրճատում: Կանաչ պարարտացումից հետո մշակված կարտոֆիլն ավելի քիչ է տուժում կոլորադայան բզեզից:
Կանաչ պարարտանյութերի ազդեցությունը

<p>ծանր, պնդեցված հողեր փխրեցում, կառուցվածքայնացում, առողջացում, հարստացում, ջրային և օդային ռեժիմների լավացում</p>	<p>թեթև, ավազային հողեր օրգանական նյութերով նյութերով հարստացում, ունակության ուժեղացում</p>
--	--

7. Միդեռատների կերային նշանակությունը ընտանի կենդանիների համար որոշվում է կերարտադրությունում դրանց լայն օգտագործմամբ :

8. Հողի ջերմաստիճանի իջեցում: Հողի վերին փուխը շերտը արագ տաքանում է օրվա ընթացքում և կորցնում խոնավությունը: Այն արագ սառչում է, այսինքն, առանց բուսական ծածկույթի հողի ջերմաստիճանային ռեժիմը հավասարակշռված չէ: Միդեռատների բուսական ծածկույթը, ինչպես նաև մուլչապատումը, ապահովում են հողի խոնավությունն ու սառնությունն օրվա ընթացքում և պահպանում այն ցրտահարությունից իշերը:

Սույն հրատարակությունը իրագործվել է <<Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի>> հասարակական կազմակերպության կողմից: